

«ԳՅՈՒՄՐՈՒ ՕԳՆՈՂ ՁԵՌՔԵՐ, ՀԱՆՈՒՆ ԳԵՏԱԿԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ



«Մույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No A/D-111-LA-10-00001 համագործակցության ու DFD-A-00-09-00141-00 պայմանագրերի շրջանակներում «Նոր Սերունդ» մանկապատանեկան և երիտասարդական ՀԿ-ի միջոցով: Մույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Նոր Սերունդ» մանկապատանեկան և երիտասարդական ՀԿ-ի պատասխանատվությամբ, հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ»:

Հունվար-փետրվար, 2012թ.



Հետազոտությունն իրականացված է «Նոր Մերունեղ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից տրամադրված , ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Բովանդակություն

Ներածություն	3
Հետազոտության նպատակ	4
Մեթոդներ	4
Արդյունքներ	5
Եզրակացություն	21
Հավելված	22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գյուճարու օգնող ձեռքեր, հանուն գետակի մաքրության» ծրագրի նպատակն է աջակցել Գյուճարու քաղաքապետարանի կողմից Գյուճարու գետակի մաքրության և դրա որակի պահպանման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը: Այդ նպատակի նվաճման համար նախևառաջ իրականացվել են Գյուճարու գետակի ջրի թեստավորման աշխատանքներ, ապա դրանց հետևել է սոցիոլոգիական հետազոտության մեկնարկը: Հունվարի 16-ից սկսվել են հետազոտական աշխատանքները և ավարտվել փետրվարի 23-ին: Սոցիոլոգիական հետազոտությունն ուղղված էր «Գյուճարի» գետակի ու դրա ափամերձ տարածքների իմիջի պարզմանն այն բնակիչների շրջանում, ովքեր քաջատեղյակ են վերջինիս հիմնախնդիրների վերաբերյալ և ունեն բարձր շահագրգռվածություն առկա վիճակի բարեփոխմանն ուղղված աշխատանքներում: Հետազոտության շրջանակներում նպատակահարմար էր կիրառել ֆոկլուս խմբերի մեթոդը՝ ընդգրկելով գետակի տարբեր հատվածներում բնակվող քաղաքացիների: Վերջինիս ապահովման համար 7 օր շարունակ ստեղծվել է պոտենցիալ հարցվողների ժողովրդագրական տվյալներից կազմված բազա: Հետազոտության արդյունքում ստացված ինֆորմացիան կծառայի հիմք պատգամ մարմնին՝ քաղաքապետարանին, ելակետային հաղորդագրության ձևավորման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության նպատակն է պարզել «Գյումրի» գետակի և վերջինիս ափամերձ տարածքների արդի իմիջը, ինչպես նաև որոշել բարեփոխումների ուղիների վերաբերյալ ձևավորված սոցիալական պատկերացումները Գյումրի քաղաքի բնակիչների շրջանում: Ավելի կոնկրետ այն սուբյեկտների շրջանում, ովքեր ունեն անմիջական առնչություն «Գյումրի» գետակի հետ:

ՄԵԹՈԴՆԵՐ

Ֆոկուս խմբեր

Ֆոկուս խմբերը համասեռ խմբերի հետ (ընտրված՝ ելնելով հետազոտության համար կարևոր հատկանիշներից) սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքման որակական մեթոդ է՝ ունեցող քննարկման կիզակետ, ուղեկցվող մոդերատորի մասնակցությամբ և հիմնված խմբային դինամիկայի սկզբունքների վրա:

Դեպքերի մեծ մասում (ներառյալ այս մեկը), ֆոկուս խմբերի ուսումնասիրություններն իրենց բնույթով որակական են: Որակական տվյալները կարող են վերլուծվել դուրս բերելու համար տրված թեմայի վերաբերյալ մի շարք հեռանկարներ ու ենթաթեմաներ: Ֆոկուս խմբերը տանում են ընտրված թեմաների վերաբերյալ կարևոր հայացքների և թույլ են տալիս մոդերատորին պարզել հարցվողների կարծիքն ինչպես որոշված, այնպես էլ խոսակցության ժամանակ ինքնաբուխ կերպով առաջացող հարցերի շուրջ: Այս հատկանիշն այն դարձնում է առավել ճկուն գործիք, քան քանակական հետազոտությունները: Ֆոկուս խմբերը նաև ունեն առավելություններ ի համեմատ մեկ անհատի հետ հարցազրույցի, քանի որ թույլ են տալիս մասնակիցներին զարգացնել մեկ-մեկու գաղափարները և առաջ քաշել նորերը, որոնք միայնակ լինելու պարագայում կարող էին ի հայտ չգալ:



ԴԻԶԱՅՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հետազոտության նպատակի նվաճման համար իրականացվել են 6 ֆոկլուս խմբեր: Ֆոկլուս-խմբերի մասնակիցների ընտրությունն իրականացվել է քաղաքի այն թաղամասերից(Ավտոկայան, Աբովյանի նրբանցք, Գերցենի փողոց, Տեքստիլ թաղամաս), որոնց բնակիչները քաջատեղյակ են գետակի հիմնախնդիրներից: 6 խմբերից 5-ում պահպանվել է սեռային և տարիքային համասեռություն, միայն 1-ում ներկայացված են եղել տարբեր սեռերի ներկայացուցիչներ հավասար 3/3 հարաբերակցությամբ: Ընդհանուր վերցրած՝ ֆոկլուս-խմբերին մասնակցել են 35 անհատներ, որոնցից 22-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչ, իսկ 13-ը՝ արական: Ֆոկլուս խմբերի տարիքային միջակայքերն ընտրվել են հետևյալ կերպ.14-20, 21-30, 31-50, 51 և բարձր: Առաջին ֆոկլուս խումբն իրականացվել է հունվարի 31-ին, իսկ վերջինը՝ փետրվարի 7-ին: Յուրաքանչյուր ֆոկլուս խումբ ձգվել է 2-2.5 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Գյումրի» գետակի իմիջը քաղաքի բնակիչների շրջանում

Ֆոկլուս խմբերի քննարկման սկզբնական հարցերից մեկը վերաբերում էր «Գյումրի» գետակի առաջնային ընկալումների, զուգակցումների պարզմանը: Այն հարցին, թե ինչ են պատկերացնում առաջնահերթ, երբ մտածում են «Գյումրի» գետակի մասին, մասնակիցների կողմից առաջարկված տարբերակները կարելի է դասակարգել մի քանի խմբերի մեջ:

Նախևառաջ կարևորվում էր «Գյումրի» գետակի ու դրա ավիամերձ տարածքների աղտոտված վիճակը: Աղտոտված վիճակը կոնկրետանում է նմանատիպ տարբերակներում.

- կենցաղային աղբ,
- գիբիլ,
- կեղտ,
- սարսափելի կեղտոտություն,
- մաքրության բացակայություն,
- ահավոր, աղտոտված, կեղտոտ,

Զուգակցումների երկրորդ խումբը վերաբերում էր հիվանդությանը: Այս դեպքում հնչած տարբերակներում գետակը ինֆեկցիայի, հիվանդության աղբյուր էր:

Իզական սեռի ներկայացուցիչներից մեկը բերեց օրինակներ՝ ելնելով սեփական փորձից:

«...Գետական իսկական ինֆեկցիայի բուն է դարձել: Անցյալ տարի էր, մեր բակի երեխաներից մի քանիսի վրա դուրս էր տվել: Ղա պատահական չէր: Ամենուր մոծակներ են, ճիճուներ: Իմ մեծ որդին էլ ալերգիկ է, գետակի մոտ գտնվող հողերի հետ խաղալուց հետո, վրան դուրս է տալիս, չգիտենք, թե ինչպես հեռու պահենք էդ փորձանքից:...»:

Գետակի հետ զուգակցումների երրորդ խումբը կապված էր կենդանիների հետ: Մասնավորապես կենդանիներից առանձնացվեցին առնետները կամ թե բնակիչների բառով ասած՝ «կռիսները», որոնք դարձել էին նրանց մտահոգության առիթներից մեկը:

«Սարսափելի մեծ չափերի ու մեծ քանակությամբ կռիսներ լցվում են մեր տները»:

«Կռիսները փողոցում վազում են մեր դիմաց, արդեն ելնում են մեր ոտքերի վրա»:

«Կռիսներ, որոնք կարող են մեր կյանքին վնաս հասցնել»:

Առնետներին վերաբերող վերջին բնութագրական կողմը հիշատակվեց շատերի կողմից: Մարդիկ ներկայացնում էին իրական դեպքեր, երբ առնետը ֆիզիկական վնաս էր հասցրել մարդուն: Ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկն անձամբ ականատես էր եղել նման դեպքի սեփական պատերի ներսում:

«Խոհանոցում գործ էի անում, մեկ էլ էրեխուս լացի ձենն եկավ, վազեցի ներս, որ ինչ, կռիսն էրեխուս մատն է խածել»:

Առնետների տարածումը կեղտոտված տարածքների հետ է կապված, որը մարդիկ գիտակցում էին: Առնետներից զատ, մի քանիսի մտահոգության առարկան էին դարձել բնակության վայրերում թափառող հիվանդ շները, ամռան ամիսներին մոծակները:

Նախնական ընկալումների ոչ պակաս կարևոր մի մակարդակն էլ կապված էր անձրևների, ձնհալի ժամանակ գետակի մակարդակի բարձրանալու ու իրենց տները, տնակները կամ հողամասը լցվելու հետ:

«Ամեն անգամ երբ անձրև է գալիս, գաք մեր տուն, ահավոր վիճակ է: Մի անգամ էլ էնքան ջուր էր լցվել, որ հասել էր մահճակալիս բարձրությանը: Անտանելի վիճակ էր»:

Հինգերորդ ասոցիացիան ծանր օդն էր: Գետակի մոտակա տարածքի հոտից անխտիր դժգոհում էին բոլորը: «Գյումրի» գետակի ափամերձ տարածքի օդի

վերաբերյալ առանձին հարց էլ էր պատրաստված, բայց հաճախ մասնակիցներն առաջ էին անցնում մոդերատորից և տալիս օդի նկարագիրը: Հոսին կցում էին «ահավոր», «սարսափելի», «անտանելի», «զզվելի», «թունավոր գազերով հարուստ» և նմանատիպ այլ ածականներ: Ավելին, այն դառնում է անտանելի հատկապես ամռան տոթ ամիսներին: Քննարկումների ժամանակ նման հոսի պատճառներից մատնանշվեցին՝

- անմիջապես գետակի մեջ թափվող կոյուղաջրերի առկայությունը,
- աղբերի կուտակումները,
- ձմռան ամիսներին կատարվող ծառահատումները:

Վերոնշյալ զուգակցումներն առավել մանրամասն կերպով պարզաբանվեցին այլ հարցերի օգնությամբ: Մասնավորապես բացվող տեսարանի վերաբերյալ ականատեսների պատկերացումները միանշանակորեն ունեին ոչ թե դրական, այլ բացասական ուղղվածություն: «Աղբ», «կեղտ», «կենդանիներ», «ահավոր», «անտանելի», «սարսափելի» բառերն էին անպակաս ձևակերպված արտահայտություններում, նախադասություններում: Բնակիչների պատկերացմամբ աղբի կեղտոտված վիճակի հիմնական պատճառներից մեկը աղբամանների բացակայությունն է իրենց տների, տնակների մոտակա հատվածներում: Հետևաբար, նորմալ երևույթ է, որ աղբը հայտնվում է գետակում ու գետակի ափամերձ տարբեր տարածքներում: Աղտոտված վիճակի հետ կապված հարցվողների որոշ մասի մոտ էլ կար բնական ցանկություն, որն է՝ ներկա բացասական գնահատականների կողքին տեսնել փոփոխված, ցանկալի վիճակ՝ գիտակցելով կանաչ ծառերի, կանաչ գույնի հանգստացնող էֆֆեկտի, մաքուր գետակի ընծեռած հնարավորությունների և, ընդհանրապես, մարդու կյանքում բնության դրական դերակատարման մասին: Կարծես մարդիկ սպոնտան կերպով ցանկություն էին հայտնում չտեսնել առկա վիճակը:

«Գյումրի» գետակի վերաբերյալ անհատների զգացողությունները հստակեցնելու համար բոլոր ֆոկուս խմբերում տրվել են հատուկ հարցեր: Հարցերից մեկն ուղղված էր մարդու զգայությունների պարզմանն այն պահին, երբ իր ձեռքը մտցնում է գետակի մեջ: Հաճախ հարցը չավարտած՝ բնակիչները միանգամից ասում էին «դա հնարավոր չէ», «դա անհնար է», «ո՞վ կմտցնի իր ձեռքը դրա մեջ» և այլ նմանատիպ



արտահայտություններ: Բուն զգացողությունները կապված էին «զգվանք», «գարշանք», «նողկանք» և այլ նմանատիպ ածականների հետ:

Ավելին, բնակիչների մեծ մասը հավելում էր, որ փորձում են հնարավորինս հեռու մնալ գետակից, եթե մաքրում են այն, ապա միայն հատուկ գործիքներով: Սակայն մտահոգիչ էր միայն հակառակն ապացուցող օրինակը՝ բերված 51 և բարձր տարիքային խմբի իգական սեռի ներկայացուցչի կողմից:

«Ես հաճախ եմ ծորի մոտ, որ մաքրեմ իմ տան մոտակա տարածքը: Եվ շատ դեպքեր են եղել, երբ անծանոթ երեխաները մտած են եղել գետակի մեջ այլումին, երկաթ և այլ նյութերի որոնման նպատակով: Ես անշուշտ իրենց վրա ջղայնացել եմ, որ դուրս գան: Դրանք հիմնականում մուրացիկ, աղքատ, նման կատեգորիայի մարդիկ էին»:

Ակնհայտ է, որ գետակի մեջ կարող է մտնել միայն այն մարդը, ով չունի ինֆորմացիա գետակի աղտոտված վիճակի մասին:

Հետաքրքրական էին նաև սոցիալական ընկալումները՝ կապված գետակի՝ որպես կենդանի, իրենց ծանոթ մարդու արտաքին տեսքի, ֆիզիկական տվյալների հետ:

Մասնավորապես մաշկի գույներից տարբեր խմբերում առանձնացված տարբերակներից էին.

- սևը,
- դեղինը (ու կապեցին դեղնախտ հիվանդության հետ),
- շագանակագույնը,
- մոխրագույնը,
- անգույնը:

Ընտրված գույներն ուղղված էին աշխարհի, այս դեպքում շրջակա միջավայրի ավելի շուտ մռայլ, քան վառ ընկալման հետ:

«Անգույն» տարբերակը նշվել է 51 և բարձր տարիքային ֆոկուս-խմբի արական սեռի ներկայացուցչի կողմից և հիմնավորել հետևյալ կերպ. «...անգույն է, քանզի տվյալ պահին ոչ մի բան չի մնացել իրա բնական տեսքից...»:

Մի քանիսը գետակը համեմատեցին հիվանդ տեսք ունեցող մարդու հետ, իսկ հիվանդությունները կոնկրետացնելիս առավել տարածված էին դեղնախտ, մալարիա և ալերգիա տարբերակները:



Ավելին, գետակին համեմատում էին ծեր ու ոչ թե երիտասարդ մարդու հետ, աղքատ ու ոչ թե հարուստ, կեղտոտ ու ոչ թե մաքուր, հիգիենայի կանոնները պահպանող սուբյեկտի հետ:

«Գետակը նման է մի մարդու, ով չի պահպանում հիգիենայի կանոնները, չի լողացել առնվազն մեկ տարի, այ էդքան կեղտոտ է գետակը»:

30-ից բարձր տարիքի անհատները խոսքի մեջ հիշատակում էին գետակի նախկին տեսքը, մինչդեռ 30-ից ցածր տարիքի մարդկանց խմբում վերադարձ դեպի անցյալ չնկատվեց: Բերված մեկնաբանություններից բերենք երկուսը.

«Պատկերը փոխվել է 1988 թվականի երկրաշարժից հետո: Երկրաշարժը շատ բան փոխեց: Մարդիկ ինչ ուզում անում էին, շատերն ապօրինի շինություններ կառուցեցին՝ հաշվի չառնելով տարածքի յուրահատկությունները»:

«Մեր տանը պահպանվել են գետակի նախկին լուսանկարներից: Մարդիկ նստած գետակի մոտ հանգստանում են: Ջուրը մաքուր է: Մեջը լողանում են: Իսկ էսօր ո՞վ նման ռիսկի կդիմի՞»:

Բացի այդ, բոլորն էլ հասկանում էին, որ եթե գետակը կարողանար խոսել, ապա միանշանակորեն ոչ թե գոհ լինելու, այլ դժգոհելու, բողոքելու ու ինչու չէ՝ հայիոյելու առիթ կունենար: Ահա մի քանի նմուշային մեկնաբանություններ.

«Շատ-շատ կասի, թե մի գցեք էդ աղբերը, երկաթները, շշերը, էս ի՞նչ կենեք մեր գլուխը, գոհ լինելու բան էլ չունի, էդ ամբողջ քաղաքի կանալիզացիան օր լցվի գետակի մեջ, էդ խեղճն ինչից պտի գոհ լինի, ում ինչ պետք չէ, լցնե՞ք գետի մեջ, կասի, որ մի կեղտոտեք»:

«Բացի էդ էլ մոտակա տների գուգարանների կանալիզացիան էլ են միացրել անմիջապես գետակին, էլ մաքրվելու հնար չկա»:

«Մաքրված փոքր տարածքներից գոհ կլինի, իսկ աղբից, կեղտոտությունից կդժգոհի»:

«Կցանկանար, որ իրեն մաքուր պահեին»:

«Կհայիոյի մեզ բոլորիս»:

Հետազոտության շրջանակներում պարզվեց, որ գետակի ու դրա տարածքի հանդեպ բացասական վերաբերմունք է ձևավորվել ոչ միայն բուն հարցվողների, այլև հարցվողների բարեկամների, ծանոթների մոտ, ովքեր առաջին հայացքից հեռու են գետակի խնդիրներից: Ծանոթները, բարեկամները հաճախ զարմանք են ապրում, թե ինչպես կարելի է ապրել նման կեղտոտ վայրում, շնչել այդ օդը:



Եթե բնակիչների ընկալմամբ առանձնացնենք ըստ կարևորության մի քանի հրատապ խնդիրներ, ապա կստանանք ներքոհիշյալ պատկերը:

Առաջին տեղում աղբի խնդիրն է: «Աղբ» ասվածն առկա է ինչպես գետակի մեջ, այնպես էլ գետակի ափամերձ բնակավայրերում: Պարադոքսալն այն է, որ համատարած աղբից, կեղտոտությունից դիզոհելով հանդերձ, դժգոհողների դոմինանանտ մասն իր կենցաղային աղբը նետում է գետակի մեջ:

«Էհ, հա, ես էլ եմ նետում գետակի մեջ, բա ո՞ւր նետեն»:



Ընդ որում, պարզվեց, որ գետակն աղտոտվում է ոչ միայն մոտակայքում ապրող բնակիչների մասնակցությամբ, այլև գետակից հեռու բնակվող անհատների աղբանետումների արդյունքում:

«... Գետակը յուրօրինակ «բնական աղբաման» է ու մեքենաներով բերում են աղբը, նետում են ջրի մեջ (հաճախ չի ընկնում ջրի մեջ, այլ ընկնում է մարդկանց կտուրի վրա, բոստանը) կամ էլ թողնում են ափին ու հեռանում: Տեսեք, բնակիչները մի կողմից դժգոհում են հոտից, դժգոհում են աղբից, կեղտոտությունից, սակայն շարունակում են թափել իրենց աղբը գետակի

մեջ»:

Դժգոհող անհատն իր ընտանիքով հանդերձ չէր աղտոտում շրջակա միջավայրը: Սակայն ցավոք նման մարդկանց թիվը մեծաթիվ չէր մեր խմբերում: Յուրաքանչյուր խմբում այդ թիվը չգերազանցեց 2-ը: Գերակայող մասը նախընտրում էր այլ տարբերակ: Քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ անգամ լուկերում կան

աղբի կուտակումներ:

Հասկանալի է, որ աղբի կուտակումները գոյանում են ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակներով:

«Լավ բան որ չեմ տեսնում, աղբն է, կեղտն է, էդ պլաստիկ շշերն են,



ցելոֆանն է ու հազար ու մի կենցաղային աղբ: Անթույլատրելի բանա, կեղտը, հազար ձևի դրանք խցանումներ են առաջացնում, ծառ են, ճյուղ են, միայն կենցաղային աղբը չի, երկաթի կտորա, փայտի կտորա, ես շատ գիտեմ, հավաքվում է, դրանք գալիս են, գետի հունը փակում են, գետը ելնում է, ափերն է քանդում, պետք է մաքրվի, դա պետք է շարունակական բնույթ կրի, մեկ անգամ մաքրելով դա արդյունք չի տա»:

Գետակի մեջ աղբանուներումները մասնակիցները ռացիոնալիզացնում էին աղբամանների բացակայությամբ: Նրանք պետք է մեծ հեռավորություն հաղթահարեին մինչ աղբամանին հասնելը, որը բավական դժվար աշխատանք էր իրենց համար:

«Մարդիկ իրենց չեն սիրում տանջել, հեշտ տարբերակը թողած ինչո՞ւ պետք է իրենց տանջեն: Գցում ես գետը, տանում է, կարևորը քեզանից հեռու լինի: Հատուկենտ մարդիկ կան, որ տանում են ու թափում են աղբարկղը»:

«Մեր տնից մոտակա աղբամանը գտնվում է 200 մետր հեռավորության վրա: Ընչի՞ պտի էդքան ժամանակ ծախսեմ, որ թափեմ: Հենա տանս մոտ է գետակը: Ցելոֆանը գցում եմ ու վերջ»:

«Եթե բոլորը թափում են գետակի մեջ, ապա ես էլ եմ թափում: Թող աղբամաններ դնեն, մենք էլ չենք թափի: Պատկերացնո՞ւմ ես, անգամ մաքրման տրեստի աշխատողն է իրա տան աղբը նետում գետակը: Էլ ո՞ւր մնաց, որ մենք չնետենք»:

«Թող իմ տան մոտ աղբաման դնեն ու ժամանակին էլ տանեն աղբը թափեն, ես էդ ժամանակ խոսք եմ տալիս, գիբիլի փող էլ կտամ, աղբս էլ գետակի մեջ չեմ թափի»:

Փաստ է, որ բնակիչները պատրաստակամ էին թափել աղբը աղբամանների մեջ, եթե դրանք լինեն մոտ հեռավորության վրա և հաճախակի մաքրվեն: Սակայն աղբամանները չմաքրվելու դեպքում, սարսափում էին հետևանքներից:

«Բայց եթե թափենք աղբամանի մեջ ու չմաքրեն, էդ ժամանակ ավելի ահավոր կլինի: Կռիսները կելնեն մեզ կուտեն»:

«Մենակ այդ ժամանակ էլ աղբամանների միջի գիբիլը չհենի կողքերից թափվի, թե չէ հոտն անտանելի կլինի ու էլի արդյունքի չենք հասնի»:



Մի քանիսն էլ կիսվեցին այն պատմությամբ, որ իրենց մոտ տեղադրված աղբամաններն էլ են գողացվել: Հետևաբար, պետք է մտածել ոչ միայն աղբամանների տեղադրման, այլև դրանց անշարժության ապահովման ուղղությամբ:

Արդեն հասկանալի է, որ «Գյումրի» գետակի ծանր վիճակը պայմանավորված է ոչ միայն աղբանետումներով, այլև քաղաքի կոյուղաջրերով՝ անմիջապես թափվող գետակի մեջ:



Աղբի գոյացումը իր հերթին ծնում է նոր խնդիրներ: Անձրևների, ձնհալի ժամանակ գետի հունի բարձրացումն էական վնասներ է հասցնում մարդկանց ունեցվածքին: Տների մեծ մասը չունի պատնեշ, հետևաբար ջուր է լցվում:

«Գյումրի գետակի երկայնքով ես չեմ պատկերացնում որևէ հատված, որտեղ կանաչ տարածք լինի, որտեղ մարդ կարողանա կանգնել: Ես գետակին մոտ եմ ապրում, մենք ստեղծել ենք մաքուր տարածք՝ այսինքն՝ լրիվ գետի երկայնքով ծառեր ենք տնկել, հետո արհեստական պատնեշ ենք ստեղծել, որը պաշտպանում է մեր տունը ջուր լցվելուց, ես բավական մեծ հողամաս ունեմ, հողամասիս ներքևի մասում ունեմ առանձին կառույցներ՝ նկուղներ և նման այլ բաներ, էդ նկուղը լրիվ հեղեղվել էր, ջուրը լցվում է»:

Ըստ կարևորության երրորդ տեղում արդեն առնետներն էին, որոնք կվերանան մաքրության ապահովման պարագայում: Առնետների կողքին ակտուալ են նաև հիվանդ շների թափառումները, ինչպես նաև սատկած կենդանիների մարմինները:

Ըստ կարևորության երրորդ տեղում արդեն առնետներն էին, որոնք կվերանան մաքրության ապահովման պարագայում: Առնետների կողքին ակտուալ են նաև հիվանդ շների թափառումները, ինչպես նաև սատկած կենդանիների մարմինները:



Մեղքի զգացում, մեղավոր կողմի նույնականացում:

Առաջացած խնդիրների համար մեղավոր կողմի վերաբերյալ խոսակցությունների ժամանակ մարդկանց կողմից գնահատելի է սեփական մեղավորության չափաբաժնի անկեղծ ընդունումը: «Մենք բոլորս էլ մեղավոր ենք», «Ժողովուրդն է մեղավոր», «սովորական մարդիկ», «ամենաառաջին հերթին բնակիչները», «բնակիչները, մենք ենք», «բնակիչը», «ես, դու, երրորդը, բոլորը»:

Հարցվողների մեծ մասը կիսում էր այն համոզմունքը, որ ոչ մեկի դրսևորած վարքը չես կարող մեղադրել: Մի քանիսը հակադիր կարծիքն արտահայտեցին՝ նշելով, որ իրենք իրենց ռեսուրսների, հնարավորությունների սահմաններում պահպանում են գետակի մաքրությունն անգամ օտար կեղտոտողներից: Աղբամանից զատ մեկ այլ վայրում աղբ թափելիս նրանք իրենց հայտնի պատիժներից կիրառում են վիրավորական խոսքերը, կշտամբանքները: Սակայն նման պատժի կիրառման դեպքում բնակիչների միջև հաճախ բռնկվում են վեճեր, առաջանում են կոնֆլիկտային հարաբերություններ:

Մի քանիսն էլ լռելը, չմեղադրելը հիմնավորում էին այնպիսի պատճառներով, ինչպիսիք են աղբամանների բացակայությունը, ապացույցների բացակայությունը կամ էլ կոնֆլիկտելու ցանկության բացակայությունը:

Բնակիչների մեծ մասը շրջապատող միջավայրը մաքրելու լուծումը տեսնում էր աղբամանների տեղադրման մեջ, սակայն որոշ մասը դեմ էին այն համոզմանը, որ աղբամանների առկայության դեպքում բոլորը կտանեն ու կթափեն աղբամանների մեջ: Ըստ նրանց՝ կրկին կլինեն մարդիկ, ում համար գետակի մեջ թափելը դարձել է սովորություն: Հետևաբար, աղբամանների բավարար քանակության ապահովման և ճիշտ վայրերում տեղադրման հետ մեկտեղ, պետք է մտածել նաև մասնավորապես մաքրության թեմայով մարդկանց կրթման ուղղությամբ:

Կոնֆլիկտներն ինքնին տհաճ երևույթներ են, որոնցից շատերը խուսափում են և միայն քչերն են պատրաստ գիտակցաբար սկսել: Սկսելու դեպքում էլ անհրաժեշտ են ապացույցներ:

«Խեղճ Գևորգ պապն ամբողջ օրը մաքրում է, եթե գալիս են ու զիբիլն իրա դիմաց են գցում, խոսում է ու վեճերի մեջ է ընկնում»:



«Ում էլ մեղադրես, կասի քո ինչ գործն է, որ խոսում ես, լավ եմ անում»։ «Մեղադրելուց առաջ պետք է տեսնես, թե ով է զգել, իսկ դա դժվար է։ Հաճախ կամ առավոտյան շուտ փեչքի գիբիլն են զգում կամ էլ երեկոյան ժամերի, երբ մութ է։ Մի անգամ գիշերն ուժեղ ձեն եկավ։ Գնացինք, որ ծառի վրա բերել են մեշուկներ են թողել, երկուսը ծանրությունից ընկել էին ներքև։ Մեշուկի մեջ էլ հացի խմոր էր լցրած։ Մինչև մաքրեցինք, հոգիներս դուր եկավ։ Հացի ֆուռի աշխատողները կարող էին բերել, որ չմաքրեինք, հետո մեր գործն էր դժվարանալու»։

«Խոսեցի վրան, ասեց, թե քո ինչ գործն է, որտեղ ուզեմ կթափեմ։ Մենք մաքուր պահենք մեր բակը, բայց բակից դուրս էլ իրավունք չունենք խոսել»։

Փաստորեն, որոշ բնակիչների կողմից կիրառվում է չձևայնացված վերահսկողության տեսակը, իսկ ձևայնացված վերահսկողությունը բացակայում է, բայց վերջինիս կարևորությունը չի թերագնահատվում։

Բացի սեփական մեղքի գիտակցումից հարցվողները մեղադրում էին նաև երկրի ղեկավարությանը, տեղական իշխանություններին՝ ի դեմս քաղաքապետարանի, քաղաքապետի և պարզապես ընդհանրացված պաշտոնյաների։

Նշենք նաև, որ կային փոքրաթիվ բնակիչներ, ովքեր կոնկրետ «մեղավոր»-ի չէին կարողանում գտնել ու պատասխանում էին. «չգիտենք, թե ով է մեղավոր», «երևի, թե ոչ ոք էլ մեղավոր չէ»։

Անգամ մեկ հարցվողի մոտ նկատվեց ֆատալիստական մոտեցում այս հարցի շուրջ։

«Ոչ ոք էլ մեղավոր չէ, երևի թե մեր ճակատագիրն է մեղավոր, որ ընկել ենք էս տեղը»։

«Գյուճի» գետակի խնդիրները լուսաբանումը ՋԼՄ-ում

Դրական կարելի է գնահատել ՋԼՄ-ից մեկում՝ հեռուստատեսությամբ, գետակի խնդիրների լուսաբանված լինելը։ «Ցայգ», «Գալա» հեռուստաընկերության աշխատակիցներն արձագանքել են զանգերին և լուսաբանել են խնդիրները, սակայն իրենց տեսանյութերի պատրաստումը, ցուցադրումը ռեալ փոփոխությունների չի հանգեցրել, խնդիրները պահպանվել են։

Քիչ չէին նաև անիրազեկ քաղաքացիները։ Իրենք նշում էին «չգիտենք», «դժվարանում եմ ասեմ, հաստատ չեմ հիշում» պատասխանները։

«Գյուճի» գետակի ցանկալի իմիջը



Եթե գետակի ռեալ իմիջը բացասական է նպատակային խմբերի շրջանում, ապա առաջանում է հարց, թե ինչպիսին պետք է լինի գետակի ցանկալի իմիջը: Ստացվել են նմանատիպ տարբերակներ. «Եթե կարող ես մեջն առանց երկմտանքի լողանալ», «Եթե կարող ես գետակի ջուրը խմել», «Եթե երեխան կարող է կանգնել կամ նստել գետակի մոտ ու թթվածնով հարուստ օդ շնչել», «Եթե կարող ես դուրս գալ ու կանաչ խոտերի վրա հանգիստ խաղալ», «Եթե ջուրն այնքան մաքուր է, որ մեջը նայելիս երևում է ավազը», «Եթե կարող ես երեկոյան ժամերին նստել գետակի ափին ու հանգստանալ», «Եթե կարող ես գետակի ջրերի մեջ լողանալ, հանգիստ լվացվել»:

Քննարկումների ժամանակ շատերն էին կիսում այն կարծիքը, որ Հայաստանում մաքուր գետակ չկա ու միայն մեր մոտ չէ, որ գետակն աղտոտված է:

Փոփոխություններ իրականացնող սուբյեկտների որոշում

Անհրաժեշտ էր նաև որոշել, թե ո՞վ կամ ո՞ր մարմինը կարող է կամ ի վիճակի է դրական փոփոխություններ իրականացնել գետակի և գետակի ափամերձ տարածքում կամ պարզապես ո՞ւմ հետ կարելի է հույս կապել:

Այդ հարցի շուրջ մասնակիցները տարակարծիք էին: Մեծ մասն անհրաժեշտության դեպքում առաջնահերթ կղիմեր քաղաքապետարան, իսկ երբ կոնկրետացնում էինք, թե կա արդյոք կոնկրետ մարդ, ում կղիմեն քաղաքապետարանում, նշում էին «քաղաքապետին», «երևի քաղաքապետին» տարբերակները: Մի քանիսն էլ կղիմեին «տեղական մարմինների» կամ «Երևանյան X հիմնարկների»: Կարճ ասած՝ դժվարանում էին տալ կոնկրետ կազմակերպությունների անվանումներ: 31-50 տարեկան իզական սեռի ներկայացուցիչների ֆոկուս խմբում բոլորը համակարծիք էին «Նոր սերունդ» ՀԿ տարբերակին դիմելու, հույս կապելու հետ: Կարծիքների մի խմբում էլ ընդհանրապես բացակայում էր որոշակի սուբյեկտը: Ջարմանալի չէր, որ մոդերատորի հարցին հարցով էին պատասխանում. «Իսկ ո՞ւմ դիմենք կամ ո՞ւմ կարելի է դիմել»: Այս դեպքում միանշանակորեն կա ինֆորմացիայի պակաս:

Մարդկանց որոշ մասը, ելնելով գետակի խնդիրների վերաբերյալ իրենց բացասական փորձից, ոչ մեկի հետ կամ որևէ կառույցի հետ չէր կապում հույս:

Համենայնդեպս, սեփական միջոցների հետ հույս կապելով հանդերձ, բոլորն էլ քաջ գիտակցում էին, որ իրենց տան կամ էլ մոտակա տարածքի մաքրումը հարցի լուծում չէ:



Նկատելի էր մի օրինաչափություն, որ 30-ից բարձր տարիքի իգական և արական սեռի ներկայացուցիչները գլխավորապես նշում էին, որ իրենց սեփական տարածքը հաճախակի մաքրում են, բայց իրենց տարածքից այն կողմ այլևս ոչ մի աշխատանք չեն իրականացնում: Մշակութային առանձնահատկությունները կրկին դրսևորվում են: Ընդհանրացնելով կարելի է ասել, որ բնակիչների մեծ մասն ապրում է ներկայով և ընդհանրապես չի մտածում, թե ինչ կլինի վաղը: Այսօր ազատվում են աղբից, իսկ հետևանքների մասին շատ քչերն են մտահոգվում: Միայն բարձրագույն կրթություն ունեցող մի քանի բնակիչներ փորձեցին կապ հաստատել ներկայի ու ապագայի, արդի ու սպասվելիք խնդիրների միջև, միկրո ու մակրոխնդիրների միջև:

«Տեսեք, Գյումրի գետակը գնում է ու միանում է Ախուրյանին, Ախուրյանը՝ Արաքսին, ստացվում է, որ մենք կեղտոտում ենք մի ամբողջ աշխարհ: Ահա թե ինչ ենք ոչնչացնում»:

3 քաղաքացիներ իրենց հույսը կապում էին գերբնական ուժի՝ Աստծո հետ:

Խնդիրների կարգավորման ուղիներ

Առկա խնդիրների վերաբերյալ սոցիալական ընկալումների երևան հանելուց զատ բոլոր ֆոկուս-խմբերում հստակեցվել են բնակիչների կողմից առաջարկված լուծման ուղիները:

Նախևառաջ լուծման հիմնական ուղիներից մեկը բնակիչները կապում էին գետի հունը խորացնելու, մաքրելու հետ, բայց որոշակի կազմակերպության տեխնիկայի, սարքավորումների կիրառման ու աշխատակիցների ընդգրկման շնորհիվ: Յուրաքանչյուրը հաճախակի մաքրում էր սեփական տարածքը: Նմանատիպ աշխատանքներ իրականացնողները նաև հավելում էին, որ այդ գործողություններն անօգուտ են, քանզի գնալով էկոլոգիական վիճակը չի բարելավվում:

Հունը ունի ոչ միայն մաքրելու, այլև տեղ-տեղ ամրացման կարիք: Ղա էին փաստում արական սեռի ներկայացուցիչներից կազմված 30-ից բարձր տարիքի սեռի ներկայացուցիչները: Ավելին, կոնկրետ տեղերի որոշումը բնապահպանների խնդիրն է:

Հատկանշական է, որ «Գյումրի» գետակի ու ավիամերձ տարածքի խնդիրները բացի բնակիչներից, ՋԼՄ-ից, ունի նաև այլ սթեյքհոլդերներ, որոնք անտարբեր չեն դրանց հանդեպ: 6 ֆոկուս խմբերում էլ կային սուբյեկտներ, ովքեր փաստում էին, որ տարին մեկ անգամ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագիրն է իրականացվում: 3-4 աշխատակիցներ մտնում են գետակի մեջ ու հանում են աղբ: Նրանց կողմից իրականացվող աշխատանքները նույնպես համարում էին անօգուտ, քանզի կար արմատական փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն:

Սի կին էլ վերհիշեց.

«Անցյալ տարի ՎիվաՍել ՄՏՄ կազմակերպության մի քանի աշխատակիցներ կամրջի տակ գտնվող բավական մեծ տարածք մաքրեցին: Մաքրելուց հետո փակցրեցին ցուցանակներ, որոնց վրա գրված էր, ասենք «բնությունը կյանք է» և այլ նմանատիպ գրություններ, բայց ցավալին այն է, որ որոշ ժամանակ անց անգամ այդ ցուցանակները կտրրեցին, իսկ տարածքը կեղտոտեցին: Շատ են ցավում: Հիմա էլ էլի բերում են կամրջի վրայից աղբը նետում են: Երկար պայքարելուց հետո իմ հարևանները տանում են աղբանոց, բայց հո բոլորին չես սաստի: Գերցենի փողոցը մեծ փողոց է իր սեփական սեկտորներով, շատ բնակիչներով: Կան, որ նորից բերում են ու նետում»:

Այսպիսով, սկզբնական աշխատանքը պետք է լինի գետակի մաքրումը, հունի խորացումը հատուկ սարքավորումների, տեխնիկայի միջոցով: Այդ աշխատանքների արդյունավետության ապահովման համար պետք է ապահովել այլ պայմաններ ևս: Հիմնական արդյունավետ պայմաններից մեկն էլ բավարար քանակությամբ աղբամանների տեղադրումն է նախօրոք որոշված ֆիզիկական տարածքներում: Ավելի կոնկրետ, աղբամանների քանակի ու ճիշտ վայրերում տեղադրման աշխատանքներին պետք է մասնակցեն և՛ մասնագետներ, և՛ բնակիչներ: Սակայն աղբամանների տեղադրումն էլ կլինի անօգուտ, եթե դրանք կանոնավոր կերպով չմաքրվեն: Այստեղ արդեն որոշակի վերահսկողության մեթոդների մասն է հարկավոր ապահովել:

Աղբամանների վերաբերյալ փոքրիկ ճշգրտումներ արվեցին երկու հարցվողների կողմից: Մեկը վերաբերում էր դրանց որակական առանձնահատկություններին, որ հնարավոր չլինի տեղաշարժել կամ փչացնել.

«Կարող է տանեն ու վաճառեն: Եղել են գողանալու դեպքեր, անգամ լուկի վրայիններն են գողանում ու վաճառում մի քանի կոպեկի դիմաց»:

Մյուս ճշգրտումը վերաբերում էր տարբերակված աղբամանների տեղադրմանը, որոնք իր ունեցած ինֆորմացիայով կան արևմտյան երկրներում:

«Աղբամաններ պետք է լինեն տարբեր իրերի համար, ասենք շշերի համար, որոնք հետո կմշակվեն»:

Կարճ ասած՝ աղբամանները պետք է բավարարեն առնվազն ներքոհիշյալ կետերին.

- տնամերձ տարածքներում աղբարկղերի տեղադրում,
- աղբարկղերի անշարժության ապահովում,
- աղբարկղերի կանոնավոր մաքրում:

Շրջակա միջավայրը պաշտպանության կարիք է զգում ֆորմալ վերահսկողության շնորհիվ: Այդ են փաստում բնակիչների կողմից բերված օրինակները.

«Եթե աղբարկղեր դնեն, ապա մարդիկ ստիպված կլինեն թափել աղբն այդ աղբամանների մեջ: Եթե աղբամանները և դրանց կողքերը լցվեցին աղբով, ապա այդ ժամանակ հաստատ կռիսների ու շների քանակն ահավոր կավելանա: Ստացվում է, որ եթե դնեն աղբարկղեր ու չթափեն դրա պարունակությունը, ապա ավելի վատ վիճակ կստեղծվի մեր համար»:

Ըստ բնակիչների՝ ցանկալի ձևայնացված վերահսկողությունը աղտոտող քաղաքացիների հանդեպ հնարավոր է ապահովել տարբեր միջոցներով: Առավել տարածված միջոցների շարքում եղել են տեսախցիկների տեղադրումը, հատուկ մասնագետների կողմից կանոնավոր վերահսկողության իրականացումը համապատասխան տարածքներում, ինչպես նաև դրամական տուգանքների սահմանումը:

«Մենք ուշադիր կլինենք, ով թափեց աղբ, եթե թեժ գիծ լինի, կզանգենք, մյուս օրը թող նամակ ստանա տուգանքի չափով»:

Բացի վերոնշյալ տարբերակներից բնակավայրերում տեղադրել ցուցանակներ՝ բնության հանդեպ սեր սերմանող կոչ դիմումներով կամ էլ նախազգուշացնող ցուցանակներ՝ զգուշացնող սահմանված տուգանքների մասին:

Հետազոտության արդյունքում հասկանալի էր նաև, որ բնակիչների շրջանում կա ինֆորմացիայի պակաս, թե հարկ եղած դեպքում ում կամ որ կառույցին կարելի է դիմել և ինչպես: Հետևաբար, կա բնակիչների կրթման ուղղությամբ թրեյնինգների անցկացման անհրաժեշտություն:

Մի քանի բնակիչներ էլ առաջարկում էին որոշակի աշխատավարձի դիմաց իրենց իսկ ներառել գետակի մաքրման աշխատանքներին, որը հիմնավորում էին իրենց բարձր մոտիվացիայով:

Երբ խոսում էինք գետակը փրկելու, աղբից պաշտպանելու մասին, մի կին առաջարկեց փակել գետակը խողովակներով: Այդ միտքը չէր ծնվել նրա գլխում, այլ փոխանցվել էր այլ սուբյեկտներից մի քանի տարի առաջ:

«Դեռ ԽՍ տարիներին կար նախագիծ, որ բերեն խողովակներ ու փակեն գետակը՝ աղբից, կեղտից, վիրուսից պաշտպանելու համար: Ավելին, գետակի մոտակա տարածքում պետք է ստեղծեին բուսաբանական այգի: Բայց ձմեռն ավելի շուտ եկավ, քան ամառը: Երկրաշարժն ելավ ու էդ պլաններն անհրաժեշտ մնացին: Եթե հարուստ կոմունիստը չի կարողացել, էս աղքատ, սոված Հայաստանը պտի՞ կարողանա»:

Չմոռանանք նշել, որ մարդկանց մոտ զարմանք էր արտահայտում մեր երկրում պլաստիկ շշերի, ցելոֆանների արտադրությունը, մինչդեռ այլ երկրներում դրանց արտադրանքը դադարեցված է: Այս դեպքում շոշափվեց խնդիր՝ պահանջող մակրո մակարդակի լուծում:

Եվ այսպես, շրջապատի աղտոտված վիճակը ձևավորում է մարդկանց բացասական աշխարհընկալումը: Հատկապես ծնողների համար մտահոգիչ են երեխաների սոցիալական պատկերացումները: Առանց մեկնաբանությունների.

«Դպրոցում որդուս ուսուցչուհին հարցնում է, թե Հայաստան ասելով ի՞նչ եք պատկերացնում, Լևոնն էլ ձեռք է բարձրացնում ու ասում, որ կողքերը լրիվ գիրլանոց է: Երևի սպասել են, որ ասի սար ու ձոր, երեխեն էլ ասել է գիրլանոց»:

Դրական կարելի է գնահատել այն, որ յուրաքանչյուր խմբում, մասնավորապես 14-20 տարեկան երիտասարդների խմբում բազմաթիվ հիմնախնդիրների կողքին արտահայտված մտքերում կար լավատեսական նոտա: Մյուս տարիքային խմբերում նույնպես հատուկենտ մարդիկ նշում էին, որ առկա ծանր վիճակը կարելի է փոխել, և՛ սեփական մարդկային ռեսուրսների, և՛ որոշակի կողմնակի աջակցության դեպքում:

Եզրակացություն

Ֆուկուս խմբերի արդյունքները վկայում են այն մասին, որ «Գյումրի» գետակի ավամերձ տարածքի բնակիչներն իրենց առօրյա կյանքում բախվում են գետակի բազմաթիվ հիմնախնդիրների հետ: Ընդհանուր առմամբ, «Գյումրի» գետակն իր ավամերձ տարածքներով հանդերձ բնակիչների շրջանում ունի ոչ թե դրական, այլ բացասական իմիջ: Նման իմիջի ձևավորումը պայմանավորված է գետակի և վերջինիս ավամերձ տարածքների աղտոտված վիճակով: «Աղտոտված վիճակ» ասելով բնակիչները հասկանում էին գետակի մեջ հայտնված տարաբնույթ անպետք կենցաղային իրերը, կոյուղաջրերի լցվելը, որն էլ իր հերթին է բարձրացրել գետակի մակարդակը: Աղտոտված վիճակի հիմնական պատճառներից մեկը բնակության վայրերում աղբամանների սակավությունն է, որն էլ հանգեցնում է գետակն յուրօրնակ «աղբամանի» վերածելուն: Աղտոտված էկոլոգիական վիճակն էլ հանգեցրել է նոր խնդիրների առաջացմանը, որոնցից մեկն ակտուալ է դառնում հատկապես անձրևների, ձնհալի ժամանակ: Կարճ ասած՝ գետակը լցվում է մարդկանց սեփական տարածքները և հասցնում է մեծ վնասներ: Ավելին, աղտոտված վիճակի պատճառով քանակական աճ են ապրել առնետները և սրվել են տարաբնույթ ինֆեկցիոն հիվանդություններ:

Ստեղծված պայմաններում բնակիչների համոզմամբ հարկավոր է նախ և առաջ մաքրել գետակը հատուկ տեխնիկայի, սարքավորումների ու մարդկային ռեսուրսների ներգրավման միջոցով խորացնել հունը: Ընդ որում, մաքրման աշխատանքները պետք է կրեն կանոնավոր և ոչ թե մեկանգամյա բնույթ: Աղբի նոր կուտակումներից խուսափելու համար էլ անհրաժեշտ է գետակի ավամերձ տարածքներում տեղադրել բավարար քանակությամբ ու որակի աղբամաններ, որոնք հեռու չեն լինի տներից, տնակներից և կանոնավոր կերպով համապատասխան մարմնի կողմից կմաքրվեն: Ավելին, կա որոշակի տարածքներում բնակիչների հանդեպ ֆորմալ վերահսկողության սահմանման անհրաժեշտություն՝ աղբը համապատասխան աղբամանների մեջ նետելու նպատակով: Այլ կերպ ասած՝ «Գյումրի» գետակի հիմնախնդիրները հնարավոր է լուծել ոչ թե հիմնական հետաքրքրված կողմի՝ բնակիչների սեփական ռեսուրսներով, այլև պատգամ մարմինների հետ համագործակցության շնորհիվ, որոնց վերաբերյալ հարցվողներն ունեին սահմանափակ ինֆորմացիա:



Հավելված

Ֆոկուս խմբերի քննարկման ուղեցույց

1. ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՎ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ա.Ներածական հատված

1.Բարի (լույս, կեսօր կամ երեկո): Ուրախ ենք Ձեզ տեսնել այստեղ: Իմ անունը Թերեզա Խաչատրյան է: Ի դեմս «Նոր սերունդ» ՀԿ-ի, Քաունթերպարթ Ինթերնեշնլ կազմակերպության հայաստանյան գրասենյակի՝ ես կցանկանայի Ձեզ հայտնել մեր շնորհակալությունը այս քննարկմանը մասնակցելու համար:

2.Այս քննարկումը ծրագրի մի մասն է: Պարզելով Ձեր պատկերացումները «Գյումրի» գետակի հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ՝ մենք կկարողանանք զարգացնել Ձեզ համար ավելի որակյալ ծրագրեր:

3.Այս քննարկման ընթացքում ես Ձեզ կհարցնեմ մի շարք հարցեր՝ կապված գետակի խնդիրների ու դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ: Պատասխանելիս դրանց խնդրում ենք արտահայտել Ձեր մտքերն ու անհանգստությունները: Ձեր կարծիքներն ու գաղափարները խիստ կարևոր են մեզ համար:

Բ.Հիմնական կանոնները

1.Խնդրում ենք հիշել, որ այստեղ չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ այս կամ այն հարցի շուրջ: Նաև, եղեք ազատ Ձեր տեսակետները, զգացմունքները և անձնական փորձն արտահայտելիս:

2.Մենք ցանկանում ենք լսել այստեղ գտնվողներից յուրաքանչյուրին: Որքան ավելի շատ ինֆորմացիա ստանանք Ձեզանից, այնքան ավելի դա կնպաստի զարգացնել արդյունավետ գործողությունների իրականացմանը, որոնք կօգնեն Ձեր կարիքների բավարարմանը:

3.Բոլոր մեկնաբանությունները ողջունվում են. և՛ դրական, և՛ բացասական: Եթե Դուք չունեք պատասխան կամ չեք հասկանում հարցը, ապա դա նորմալ է, կարող եք ինձ ասել դրա մասին: Հետևաբար, մի ամաչեք ասել «Ես չգիտեմ» կամ «Ես չեմ հասկանում, թե ինչի մասին եք Դուք խոսում»:

4.Խնդրում ենք Ձեզ ազատ զգացել, եթե Դուք համաձայն չեք որևէ մեկի կարծիքի հետ: Մենք ցանկանում ենք ունենալ միմյանցից տարբերվող տեսակետներ:

Գ.Պրոցեդուրա



1. Քննարկման ընթացքում կօգտագործվի ծայնագրող սարք, քանի որ ինձ հարկավոր է լինել ուշադիր Ձեր խոսքերին: Ավելի ուշ, ես կլսեմ ձայնագրությունը: Այնուհետև ստացված ինֆորմացիան կօգտագործեմ զեկույցում: Խնդրում եմ հիշեք, որ Դուք ոչ մի կերպ չեք նշվի դրանում: Մենք կսկսենք ձայնագրումը ծանոթացումից հետո:
2. Այս քննարկումը կոնֆիդենցիալ բնույթ ունի: Ինչ որ Դուք կասեք կամ կլսեք, չպետք է կիսվի այս սենյակից դուրս գտնվող որևէ մեկի հետ: Ինֆորմացիան պետք է մնա ապտեղ: Արդյո՞ք մենք բոլորս համամիտ ենք:
3. Սա խմբային քննարկում է, հետևաբար Դուք կարիք չունեք սպասել մինչև ես կդիմեմ ձեզ: Պարզապես խնդրում եմ լսել միմյանց և միաժամանակ չխոսել:
4. Մենք միասին բավական մեծ ինֆորմացիա ենք ստանալու: Քննարկման ընթացքում ես կարող եմ փոխել խոսակցության թեման: Խնդրում եմ ինձ ընդհատեք, եթե ցանկանում եք ավելացնել հավելյալ ինֆորմացիա, որը Դուք զգում եք կարևոր է մեր քննարկման համար:
5. Քննարկումը կծգվի մոտավորապես 2 ժամ: Մենք ընդմիջում չունենք, բայց հոգնելու դեպքում կարող եք գնալ կողքի սենյակ:

Դ. Ինքնաներկայացում

1. Եկեք սկսենք ինքնաներկայացումից: Ինչպես ես արդեն նշեցի, իմ անունը Թերեզա Խաչատրյան է: Ես 26 տարեկան եմ: Ծնվել եմ Գյումրի քաղաքում: Ամուսնացած չեմ: Երեխաներ չունեմ:
2. Այժմ խնդրում եմ ներկայացրեք ինքներդ Ձեզ: Տվեք Ձեր անունը, տարիքը, ծննդավայրը, տարիների քանակը, որ ապրում եք Գյումրիում, ամուսնական կարգավիճակը և երեխաների քանակը:

II ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. «Գյումրի» գետակի առկա վիճակի ընկալման առանձնահատկությունները

1. Ո՞ր թվականից եք բնակվում «Գյումրի» գետակի ափամերձ տարածքում:
2. Երբ մտածում եք «Գյումրի» գետակի մասին, ապա առաջնահերթ ինչն է գալիս Ձեր մտքին, ի՞նչ եք պատկերացնում: (Ճշգրտել)
3. Երբ քայլում եք գետակի ափամերձ տարածքում, ապա բացվող տեսարանն ինչպիսի՞ն է: Կարո՞ղ եք մի քանի բառերով ներկայացնել:

4. Երբ Ձեր ընկերները, բարեկամները կամ ծանոթները՝ բնակվող քաղաքի այլ փողոցներում, գալիս են Ձեզ հյուր, եղե՞լ են դեպքեր, երբ կարծիք են արտահայտել գետակի մասին կամ Ձեր բնակության վայրի մասին:
5. Պատկերացրեք մի պահ, որ Ձեր ձեռքը նստցնում եք գետակի մեջ, ապա ի՞նչ կզգաք այդ պահին:
6. Գետակի մոտակայքում յուրահաստուկ հոտ զգո՞ւմ եք: Այդ հոտը շնչելիս ինչպիսի՞ն է Ձեր դեմքի արտահայտությունը:
7. Պատկերացրեք, որ «Գյումրի» գետակը կենդանի մարդ է: Եթե խոսի, ապա. ա) առաջնահերթ ի՞նչ կասի, բ) ի՞նչից կարող է գոհ լինել և գ) ինչի՞ց կարող է դժգոհել:
8. Շատ լավ, իսկ այդ «մարդու» մաշկի գույնն ինչպիսի՞ն է և թե ի՞նչ արտաքին տեսք ունի: (Խնդրում ենք ճշգրտել):
9. Երբ մի քիչ առաջ անցնում էինք գետակի մոտով, նրանում նկատեցինք շշեր, հագուստի մնացորդներ և այլ աղբ, ինչպե՞ս դա կբացատրեք:
10. Եթե առանձնացնենք գետակի հրատապ լուծում պահանջող մի քանի խնդիրներ, ապա ըստ կարևորության առաջին հերթին, որը կնշեիք, երկրորդ հերթին և երրորդ հերթին:

Բ. Ինֆորմացիայի ստացման հիմնական աղբյուրները

1. Գետակի վերաբերյալ ինֆորմացիա լսե՞լ եք հեռուստացույցով կամ ռադիոյով:
2. Բացի ԶԼՄ-ից, ընկերների, հարևանների հետ խոսում ե՞ք գետակի թեմայով, եղե՞լ են նման դեպքեր:

Գ. Գետակի ցանկալի վիճակի վերաբերյալ սոցիալական պատկերացումները

1. Հիմա առաջարկում են խոսել գետերի մաքրության շուրջ: Ձեր պատկերացմամբ, ինչպիսի՞ն պետք է լինի մաքուր գետակը: Կարո՞ղ եք մի քանի հատկանիշներ նշել:
2. «Գյումրի» գետակի առկա վիճակը փոխելու համար ի՞նչ է հարկավոր իրականացնել, ի՞նչն է հարկավոր պահպանել, իսկ ի՞նչը փոխել:

Դ. «Գյումրի» գետակի առկա վիճակի փոփոխման մեջ պատասխանատու կողմերը

1. Ո՞վ կամ ովքե՞ր են մեղավոր ստեղծված իրավիճակում:

2. Ո՞վ կամ ո՞ր մարմինը կարող է կամ ի վիճակի է դրական փոփոխություններ իրականացնել գետակի և գետակի ափամերձ տարածքում կամ ո՞ւմ հետ կարելի է հույս կապել մեր օրերում:

3. Դուք անձամբ, Ձեր սեփական ուժերով, միջոցներով, կարո՞ղ եք փոքր դրական արդյունի հասնել:

Այժմ առաջարկում եմ միասին դիտել մի քանի լուսանկարներ, որոնք արվել են մի քանի օր առաջ:

Ե. Կոնկրետ լուծումների առաջարկներ:

1. Հիմա եկեք փորձենք առաջարկել նոր, հետաքրքիր լուծումներ, որոնք կարող են դրական նշանակություն ունենալ գետակի և ափամերձ տարածքի վիճակի վրա:

2. Ենթադրենք Ձեզ տալիս են կախարդական փայտիկ, որով Դուք կարող եք փոփոխություններ իրականացնել: Խնդրում եմ նկարագրեք Ձեր առաջին քայլը, որը կհայտնեք բարձրաձայն:

3. Եթե Դուք չեք անելու որևէ քայլ, այլ միայն գաղափար եք առաջարկելու համապատասխան մեկին, ապա ինչ խորհուրդներ կտայիք: